ուր քերեստէ նաւուց կուտեալ են, զնոսին ևս հրդեհեալ է։ Դարձեալ և պատմէ՝ թէ բազումք ի յերևելի անձանց փախեան ի ստամպօլու և ցրուեցան ի կողմանսն անատօլու վասն երկիւղի զօրացն էքրատորի, իբրև տեսեալ զայս իշխանաց մեծաց, որ յօր(ը)ստօրէ դատարկանայ քաղաքն, սկսեալ են հոչակել թէ խաղաղութիւն է, նա և իսկ հրամանաւ արգելեալ են։...

... գիր եկն առ մեզ ի սօփրամանասարիցն, և գրեալք են, թէ աստի մինչև ցութ օր, գրեցէք մեզ զթիւ անձանց ձերոց, զանուանս իւրաքանչիւրոցն յատուկ յատուկ տանն անուամբք, քանի են կարգաւորքն, այսինքն քահանայքն, և որքան են եղբարքն, այսինք(ն) ֆոաթքն և թէ ինչ քարիքայի վերայ էք, և ըստ ոմանց հմտագունից, կամին զապաթուն իշխանութիւնն իմանալ արդեօք յաւիտենական է, թէ ժամանակաւոր։ Եւ ևս թէ որով եղանակաւ տրեցեալ եղև ձեզ մենաստանս այս։ Եւ իբրև ընկալաք զայս, գնացաք առ նանին...։ Այս բան ոչ է նոր ինչ, և ոչ վասն մեր միայն, որովհետև վասն կարգաւորաց կարգեցեալք են, իբրու քննիչ և տէր, կամին այժմ տեղեկանալ զմէնջ, թէ ովք են և որքանք են, որպէս զի ընդ այլ եկեղեցականս անցուցանիցեն ի յարցանագիրս իւրեանց, որպէս օրէն է տեղւոյս վերակացուաց վանորէից, թէպէտ նախապէս դոյ(զ)ն ինչ երկեայ, բայց յետոյ տեղեկացեալ, սրտադիւր եղէ...։

Նուաստագունեղ ծառայ
Եղիա վարդապետ
ծառայ ծառայիցդ

ԺԳ.

Մխիթարայ աթոռակալին մէկ ուրիշ նամակէն, զոր Հռովմ ղրկած է, կը քաղենք երեք հետաքրքրական պատառիկներ, յորս դիտելի է թէ 1718ի չորութիւնը որքան աւելի զգալի և սարսափելի եղած է ի Վենետիկ, քան վերջին տարուանս (1921–ի) սաստիկ չորութիւնը։

Կը տեսնենք նաև որ՝ անմարդարնակ և անտես թողուած Ս. Ղազար կղզին, ինչպիսի՛ մեծ հոչակ կը ստանայ՝ այն ինչ Մխիթար իրեններովն հանդերձ հոն կը մտնէ ու կը սկսի ամէն տեսակէտով բարեզարդել։

Գերայարգելոյ տեառն տեառն Մխիթարայ՝ Հօրն մերոյ Աբբայի

... դժուարաւ գտանի այժմ ջուրն, այնքան սաստիկ և շատ բերին ջրաբերքն ի քաղաքն, մինչ զի փատուայու գետն նուազեցուցին, այժմ յայլմէ գետէ բերեն, և մեծ նաւ չի բանիր, վասն սակաւութեան և նուազման ջրոյն։ Ցերեկեան օրն հիւր ունէաք, և լաւ ջուր ոչ. այսօր երկու երեք պարխաճ հազիւ գտաք, ես միշտ ի կասկածի է(ի), թէ յաւուր միում ընտանիքն սանմառթինու փիօվանին բաց ասեն, և ոչ տայցեն զջուր մերայնոց, որ միշտ անտի առնուն. այսօր լուայ որ նա ևս բաց ասացեալ է, և այս ոչ է մեղադրելի, սոքա գնեն մի սօլտի զպարխաճսն...։ Այսքան աղօթք, և աղաչանք՝ չեղև որ մին լաւ անձրևէր. և թէ յայս ամ ոչ տկարանամք և անվնաս անցուցանեմք, գիտասջիք, զի այլ ոչ եմք տկարանալոցք։...

... Վերափոխման Աստուածածնայ օրն մին պսակ եղև յեկեղեցւոջ մերում, սեպուհ էր փեսայն, նախապէս հարցաք սանճիպինեանի փիօվանին, և ապա թոյլ տուաք գալ, ասաց փիօվանն, մակարի թէ յամենայնում կիրակէի զային, զի աստ սովորութիւն է, և ոչ է դէմ պատրիա(ր)զին կամ փիօվանին, ազատ է այս գործ, ուր կամին գնան, մանաւանդ ըստ մեծի մասին կարգաւորաց եկեղեցին գնան և անդէն պսակին, բայց հարկաւոր է զի քահանայն լիցի հարսին քոնդրատէն, եկեղեցոյն չահ այս լինի, որ բերած մոմն անդէն թողու, հայոց ժամն ևս գնան, նա և քափուճոչ, և այլոց կարգաւորաց եկեղե-